Արձանագրություն N 5
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«19» փետրվարի 2019թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Հարությունյանը, Լ Ոսկանյանը, և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը
Բացակայում է՝ Ն.Մեսրոպյանը

1. Գնանշման հարցում ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին

(Կ. Գասպարյան)

18.02.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն «Արմստրոյ» ՍՊԸ-ն և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի մասով ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը Արցախի հանրապետության հարկ վճարողների վերաբերյալ հաշվառում չի վարում: Նույն եզրակացության համաձայն՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է նախատեսված շեմը գերազանցող՝ 112,878 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների գնահատման և ստացված եզրակացության ամփոփման մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Կոմիտեից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Արմստրոյ» ՍՊԸ-ի, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի և «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

2. «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար: Հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով՝ որոշեց «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժել և <<Գնումների

Scanned by CamScanner

մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. Գնանշման հարցում ընթացակարգի ընտրված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ որոշում ընդունելու և հարկային հարցում կատարելու մասին մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց՝

1. ընտրված /հաղթող/ մասնակիցներ ճանաչել՝

- «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ **1-ին, 2-րդ և 3-րդ, 15-րդ** չափաբաժինների մասով,
- «Արմստրոյ» ՍՊԸ-ին՝ **4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ** չափաբաժինների մասով,
- «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ին **6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ** չափաբաժինների մասով:

2. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը և սույն արձանագրության 2-րդ մասի 2-րդ կետը՝ **12-րդ և 17-րդ** չափաբաժինների մասով առաջին տեղ զբազեցրած մասնակիցներ ճանաչել.

- <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՅՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ին **12-րդ** չափաբաժնի մասով,
- «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ին **17-րդ** չափաբաժնի մասով:

1. Հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

2. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության և փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner